Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի
2017թ. հունվարի 26-ի նիստի թիվ 4/2 որոշմամբ

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Սիմոնյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման (այսուհետև՝ ուսանողների հարցման) կանոնակարգը սահմանում է ԵՊՀ ուսանողների կողմից համալսարանի դասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:

1.2. Ուսանողների հարցումն անցկացվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի և ԵՊՀ կանոնադրության պահանջների համաձայն և համարվում է ԵՊՀ ուսանողների ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և դասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:

1.3. Ուսանողների հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարում է ԵՊՀ գիտական խորհուրդը:

2. Ուսանողների հարցման անցկացումը

2.1. Ուսանողների հարցումն իրականացվում է առցանց եղանակով, յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանից հետո հետևյալ ժամանակահատվածներում.

1-ին կիսամյակից հետո՝ փետրվարի 5-ից մինչև փետրվարի 20-ը՝ առկա ուսուցմամբ սովորողների համար և մարտի 10-ից մինչև մարտի 25-ը՝ հեռակա ուսուցմամբ սովորողների համար:

2-րդ կիսամյակից հետո՝ հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 7-ը և՛ առկա, և՛ հեռակա ուսուցմամբ սովորողների համար:

Ավարտական կուրսերում հարցումն անցկացվում է ապրիլի 10-ից մինչև ապրիլի 17-ը՝ առկա ուսուցմամբ սովորողների համար և մայիսի 8-ից մինչև մայիսի 15-ը՝ հեռակա ուսուցմամբ սովորողների համար:

2.2. Հարցմանն ուսանողը կարող է մասնակցել ցանկացած վայրից՝ օգտվելով ԵՊՀ ուսանողական անհատական վիրտուալ տիրույթից, մուտք գործելով համալսարանական իր էլեկտրոնային փոստ:

2.3. Ուսանողների հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (հավելված 1), որում ուսանողը 1-5 միավորանոց գնահատման սանդղակով պատասխանում է առաջադրված հարցերին:

2.4. Գնահատման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր դասախոսի համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով[1] և միջին քառակուսային շեղումով[2]:

2.5. Հարցաթերթի ձևանմուշն ունի նաև տեղեկատվության հատված, որի հարցերը յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում են ռեկտորի կողմից:

2.6. Հարցումը կազմակերպում և վերահսկում են ուսումնամեթոդական վարչությունը և ֆակուլտետները:

1.Միջին թվաբանականը հաշվարկվում է ըստ առանձին դասընթացների և հարցերի, որը մատնանշում է տվյալ դասախոսի վարկանիշը հարցման մասնակիցների տվյալ խմբում:

2.Միջին քառակուսային շեղումը ցույց է տալիս գնահատումների շեղման չափը միջին թվաբանականից. որքան մեծ է միջին քառակուսային շեղումը, այնքան հարցման մասնակիցների անհատական գնահատումները ավելի լայն տիրույթում են ցրված:

2.7. Ուսանողները հարցաթերթի՝ կարծիքների և առաջարկների համար հատկացված հատվածում կարող են նաև ներկայացնել դասավանդման որակի և ուսումնական գործընթացի բարելավմանը միտված իրենց առաջարկները: Բացի այդ, ուսանողները կարող են կարծիքներ ներկայացնել յուրաքանչյուր դասախոսի աշխատանքի վերաբերյալ:

3. Ուսանողների հարցման արդյունքների օգտագործումը

3.1. Ուսանողների հարցման արդյունքները մշակվում են տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնում:

3.2. Հարցման արդյունքները յուրաքանչյուր կիսամյակ քննարկվում են համապատասխան ամբիոններում, այնուհետև ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում: Քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ՝ ուղղված դասախոսի դասավանդման որակի բարելավմանը:

3.3. Հարցման արդյունքները ուստարվա վերջում ամփոփված ներկայացվում են ԵՊՀ գիտական խորհրդում:

3.4. Դասախոսն իրավունք ունի ամբիոնի վարիչից ստանալու իրեն վերաբերող գնահատականներն ու կարծիքները և ծանոթանալու դրանց:

3.5. Ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվում են՝

- դասախոսների ինքնավերլուծության իրականացմանը և նրանց կողմից դասավանդման մոտեցումների և կիրառվող մեթոդների շարունակական բարելավմանը աջակցելու նպատակով,
- դասախոսների պաշտոնակալման, առաջխաղացման և խրախուսման նպատակով,
- դասախոսներին լրավճարներ հատկացնելու նպատակով:

3.6. Հարցման արդյունքներն օգտագործվում են միայն ամփոփ տեսքով, իսկ անհատական տվյալների գաղտնիությունը երաշխավորվում է:

Հավելված 1

1.	Գնահատե՛ք Ձեր ֆակուլտետի դեկանի, դեկանի տեղակալ(ներ)ի՝ ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքները
2.	Գնահատե՛ք Ձեր ֆակուլտետի դեկանատի գործավարների աշխատանքը
ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՆՇԵԼ, ԹԵ ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ՀԱՄԱՁԱՅՆ ՎԵՐՈՆՇՅԱԼ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՊՆԴՈՒՄՆԵՐԻՆ	
1.	Դասընթացի նյութը մատուցում էր պարզ և հասկանալի
2.	Դասընթացն ապահովում էր անհրաժեշտ ուսումնական և մեթոդական նյութերով
3.	Նպաստում էր ուսանողների մասնակցությանը և ներգրավվածությանը դասընթացին
4.	Խթանում էր ուսանողների վերլուծական և քննադատական մտածողությունը
5.	Ուսանողների գիտելիքները գնահատում էր օբյեկտիվորեն
6.	Դասընթացին վերաբերող հարցեր քննարկելու համար ժամանակ էր տրամադրում նաև լսարանից դուրս
7.	Չէր բացակայում և չէր ուշանում դասերից
8.	Լսարանում ապահովում էր պատշաճ կարգապահություն
9.	Լսարանում ժամանակն օգտագործում էր արդյունավետ
10.	Բարյացակամ և հարգալից էր ուսանողների նկատմամբ

1.	Դասընթացը որքանո՞վ էր օգտակար Ձեզ համար
2.	Կցանկանայի՞ք մասնակցել տվյալ դասախոսի կողմից դասավանդվող մեկ այլ դասընթացի